

ԾԱՂԻԿ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶԱԲԱԹԱԹԵՐԹ
ՏՂՈՑ ԵՒ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ

Բ. ՇՐՋԱՆ, Թ/Լ 1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ծայիկի Բ. Տարեբջանը	
Պուպրիկին փորը (պատկերով)	ԱՂԵՐՍ. ՓԱՆՈՍԵԱՆ
«Կուկուլիկու» (պատկերով)	ՏԻԳՐԱՆ ԶԻԹՃԵԱՆ
«Ծաղիկ»ի հարցումը (ո՞ր տարիք կը սիրեմ)	
Պզտիկ կամիր Գլխանոցը (պատկերով)	ԲԷՌՕ
Հաւատարիմ երջ ճրագը	ՀՐԱԶԵԱՑ
Պե՛տ ի՛նչպէս պահեց սեղանը (պատկերով)	Յ . . .
Պիսակուած կապը (թերթոն)	ԲՕՆՐՆ ՏՕՅԼ

Հանելուկ, Հառուական հարցում, Էլևն.



ԲԱՑՈՒԱԾ Է

„ԾԱՂԻԿ” Ի Բ. ՇՐՋԱՆԻՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԿՍՐԴԱԼ ԿՈՂԲԻՆ ԿՐԴ. ԵՐԵՍԸ



Գ/ն 20 փարս

Տպագրութիւն ՍԱԳԱՆԱՆ, Կալաթա



ՎԱՅԵԼՉԱՍԷՐ ԿԻՆԵՐԸ

ՈՐՈՆՔ Կ՛ՈՒՋԵՆ ՊԱՇՊԱՆԵԼ

ԻՐԵՆՑ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ

ՊԵՏՔ Է ԱՄԷՆ ՕՐ ԳՈՐԾԱԾԵՆ

ՃՇՄԱՐԻՏ

ՔՐԷՄ ՍԻՄՈՆԸ

ՎԼԻՍԷՐԻՆՈՎ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ

ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԴԱԼ ՀԵՏԵԻՆԱԼ ՏՈՂԵՐԸ

ԿՆՈՋ ՄԸ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ Կատարեալ չլլա՞ր՝ առանց գոյնի, մաքրութեան: Բոլոր այն տիկիները որոնք հոգը ունին այս թանկագին ձիրքերը անկորուստ պահելու, պէտք է բացարձակապէս մերժեն գործածութիւնը այն աժանագին արտադրութիւններուն որոնք շունդալից ուէքլամներով ծախու կը հանուին Գործածուած նախնական նիւթերուն ստորին տեսակէ ըլլալն է որ ներելի կ'ընէ այդքան աժան ծախել զանոնք: Այս պատճառաւ նուազ ստորին տեսակները պատրաստուած են մեղրամոմով կամ օճառով, որոնք օդին մէջ կ'չորնան, և միւս տեսակները, աւելի վտանգաւոր մորթին համար, կ'պարունակեն այն տեսակ ճարպեր որոնք կ'ծթոին և քիչ առհնէն առաջ կ'բերեն անդարմանելի կարծրութիւններ և խորշումներ:

Միայն ՔՐԷՄ ՍԻՄՈՆԸ հնարուած 1860ին, զուտ նշայի Կլիւեքտրիով բաղադրուած՝ առանց ո՛ր և է նիւթի, իրապէս առողջապահական արտադրութիւն մըն է. բովանդակ աշխարհի մէջ բոլոր վայելչասէր կիներէն ընդունուած է և նոյն իսկ իր անհուն յաջողութեան պատճառաւ է որ բազմաթիւ կեղծ նմանութիւններ երեւան կ'ելլեն ամէն օր:

1900ի տիեզերական Արուեստանանդէսին մէջ արժանացած է Ոսկի Միտալի:

Ի հարկէ ՔՐԷՄ ՍԻՄՈՆԻ գինը աւելի բարձր է կեղծ պատրաստութիւններու գինէն և ասոր պատճառը իսկապէս իր նախնական նիւթերուն ազնիւ տեսակէ ըլլալն է, որովհետեւ բոլոր ծախողները կ'խոստովանին թէ հակառակ անոր համեմատաբար բարձր գնոյն՝ նուազ կը շահին նմանօրինակ ուրիշ տեսակներու վրայ:

Բնաւ մի՛ վարանիք ուրեմն պահանջել ճշմարիտ ՔՐԷՄ ՍԻՄՈՆԸ, միշտ լաւ ուշադրութիւն ընելով վերի վաճառանիշին և յաւէտ երիտասարդ ու թարմ պիտի մնաք, մինչդեռ ձեր դրոցուհիները պիտի պառաւնան՝ ցաւելով իրենց սխալ խնայասիրութեան վրայ:

ԾԱՂԻԿ

ՑՈՐԷՆ Ս Ս Գ Ս Ե Ս Ե

Խմբագիր Յակոբ Տէր-Յակոբեան

(725) Ի. ՏԱՐԻ — ԹԻԻ 1

15 ՄԱՅԻՍ 1908

“ԾԱՂԻԿ”Ի Բ. ՏԱՐԵՇՐՁԱՆԸ

ԾԱՂԻԿ իբր մանկանց և դպրոցականներու հանդէս, հրատարակութեան երկրորդ շրջանին մէջ կը մտնէ այսօր:

Անցեալ տարի այս միջոցներուն, երբ ձեռնարկեցինք այս գործին, թէև յուսալից էինք, բայց ոչ ապահով: Չէինք գիտեր թէ պզտիկներու մտաւոր կրթութեան և բարոյական դաստիարակութեան կոչուած հանդէս մը ո՞րչափ ընդունելութիւն պիտի գտնէր թէ՛ ծնողքներէն, թէ՛ դաստիարակներէն և թէ՛ դեռահաս սերունդէն:

Այսօր, ուրախ ենք ըսելու թէ Ծաղիկի շուրջ արթնցած համակրութիւնը քաջալերիչ էր, և այդ համակրութիւնը մեզի կը պարտաւորէ յարատեւել այս ճամբուն մէջ:

Չենք ուզեր խօսիլ մեր այս ձեռնարկին կարեւորութեան վրայ որուն պէտքը բաւական ատենէ կը շեշտուէր արդէն ամէն կողմէ: Չենք ալ ուզեր աւելորդ խօսքեր ընել մեր ջանքերուն և զոնողութեանց մասին, զորս սիրով կատարեցինք ու պիտի կատարենք, բաւական է որ քաջալերուինք: Այն յաւակնութիւնը չունինք թէ կատարեալ մանկական հանդէս մը եղած է Ծաղիկ: Ընդհակառակը մենք ամէնէն աւելի լաւ գիտենք մեր թերութիւնները, որոնք բնական է թէ՛ աւելի նիւթականի հետ կապուած ըլլալով՝ տակաւ պիտի բարելաւուին: Արդէն մեր ընթերցողները՝ դիտած ըլլալու են որ տեւական ջանք մը կ'ընենք աւելի լաւ վիճակի մը մէջ դնելու թերթը, զայն ամէն հասակի մատչելի և հաճելի ընելու համար: Խնդրած էինք մեր մօտաւոր և հեռավոր բարեկամներէն, իրենց թելադրութիւնները ընելու և կրնանք խոստովանիլ թէ եղած դիտողութիւնները ջանացինք գոհացնել:

Նոր շրջանին մէջ կը խոստանանք աւելի զարգացնել Ծաղիկը : Ինչպէս այսօրուան թիւէն ալ կը տեսնուի , պատկերներու թիւը աւելցուցած ենք , և այսպէս պիտի շարունակենք , աւելի պէսպիսութիւն և շահեկանութիւն դնելու համար թերթին մէջ :

Մանկական թերթ հրատարակելու գլխաւոր դժուարութիւններէն մէկն ալ այն էր մեր մէջ որ մեր գրչի մարդիկը չեն զբաղիր մանկութիւնով : Սակայն աշխատեցանք զիրենք բոլորել Ծաղիկի շուրջ , մանաւանդ բացառիկ թիւերու առթիւ , և իրենց շնորհակալութիւն կը պարտինք : Աշխատակիցներու շնորհակալութեան մէջ առանց մասնաւոր յիշատակութեան չենք կրնար անցնիլ Աղեքսանդր Փանոսեանի մասին : Մանուկներու սիրած այս բանաստեղծը իր յաճախակի հաճելի աշխատակցութիւնովը՝ լաւագոյն ընթերցումներ պարգեւեց թարմատի սերունդին , և պիտի շարունակէ իր պատուարեր օժանդակութիւնը՝ մանկանց այս հանդէսին :

Շնորհակալութիւն նաև Պոլսոյ և Գաւառներու մեր բոլոր բարեկամներուն , համակիրներուն և գործակալներուն , որոնք Ծաղիկի տարածման օժանդակեցին հաճութեամբ : Իբր դաստիարակութեան գործ մը , այս թերթը պէտք ունի մանաւանդ օժանդակութեանը մեր ուսուցիչներուն և ուսուցչուհիներուն , որպէս զի դըպրոցականներու մէջ տարածուի : Գոհ ենք որ մեր դաստիարակները անտարբեր չկեցան , և ասկէց ետք ալ կը յուսանք թէ պիտի շարունակեն Ծաղիկի տարածման համար իրենց բարեացակամութիւնը :

Մասնաւոր շնորհակալութիւն նաև մեր յարգելի պաշտօնակիցներուն , որոնք իրենց քաջալերութիւնը չի զլացան մեր գրական այս ձեռնարկին համար , մանաւանդ Մանգուլմեհի և Արեւելի որոնք ամէն շաբթու հրատարակեցին թերթին բովանդութիւնը և այսպէս Ծաղիկ չտեսնողները առիթը ունեցան գաղափար մը կազմելու անոր մասին :

Հոս կը յիշեցնենք դարձեալ մեր այն բաժանորդներուն որոնք չեն վճարած իրենց պարտքը , որպէս զի անմիջապէս ուղարկեն մեզի իրենց բաժնեգինը , քանի որ թերթերը պիտի դադրեցնենք : Իսկ անոնք որ գնահատելի պարտաճանաչութիւնով մը վճարած են իրենց պարտքը , կը խնդրենք անոնցմէ ալ որ իրենց նոր բաժնեգինները կարելի եղածին չափ փութով հասցնեն մեզ , քանի որ մեր պայմանը կանխիկ է :

Ահաւասիկ տարի մը որ բոլորեցինք : Հիմա , աւելի ապահով ենք մեր ձեռնարկին յաջողութեան համար և վստահ ենք որ մեր այս առաջադրութեան մէջ մեզի եղած քաջալերութիւններն ալ կ'աւելնան և այսպէս Ծաղիկ տակաւ կը դառնայ անհրաժեշտ և կատարեալ բարոյական աղբակ մը Հայ նոր սերունդին մէջ :





ՊՈՒՊՐԻԿԻՆ ՓՈՐԸ

Պզտիկն Աննիկ, բերանաբաց, ժպտագին,
Մկրատի մը սըրուած ծայրովն, անցեալ օր,
Կը կըտըրտէր մարմինն իր նոր պուպրիկին,
Տեսնելու թէ՛ փորին մէջ ի՞նչ կար անոր . . . :

Բա՛ն մ'ալ չի կար:— Խաղալիկին մէջ անսիտ,
Շինողն էր դրած փայտի տաշեղ, մազեր թաւ:
Տղան այն ատեն մոռցաւ իր խաղն ու ժըպիտ.
Դատա՛րկ էր իր պուպրիկին . . . — ու լալ ըսկըսաւ :

— Պէտք չէ քննել խորն հաճելի բաներուն .
Մարդ մահո՛ւ չափ կը ակրի այն ժամանակ:
Ըզգուշացէ՛ք, մի՛ փորձըւիք, աղա՛ք սիրուն,
Ձեր պուպրիկին փորիկն երբէք մի՛ բանաք :

“ԿՈՒԿՈՒԼԻԿՈՒ,”

(ԵՐԿՈՒ ՀՈԳԻՈՎ)



Մանուկ անհատը կը ջանայ օրինակել ու կեղծել ի՛նչ որ բնութեան մէջ աչքի իյնող, հետաքրքրակա՛ն ու տպաւորիչ է:

Ա՛յսպէս, իր ամէն օրուան լսած ու տեսած բանն է՝ Ա.քլոր եղբայրը իր խօսնակի պաշտօնին մէջ: Ան պահէ պահ, մէ՛յ մըն ա՛լ տեսնես կը փետրանայ (խըրձաղիզուիլ) կը թռի բարձր տեղի մը վրայ կը կոթողանայ, ու զարեվիզ կամ ա-

րարիկ ու ոսկեփայլիկ կարմիր-կատար գլուխն ամբարձելով՝ կը ձգէ իր կլկլուն ազդածաճայնը բիւրախազ. —

— Կո՛ւկո՛ւլիկո՛ւո՛ւ, կո՛ւկո՛ւկո՛ւ կո՛ւո՛ւ...:

Եւ կոկորդն ու գլուխը կը խոնարհեցնէ՝ փո՛րը կը քաշէ, յաղթական վայրէ՛ջքն ընելով ձայնատու ամբիոնէն:

Մանուկներն ալ ետ չեն մնար աքլորէն՝ իրենց պուպուշիկ աղուամազիկ գլխովն ու նուրբ, մանկային ձայնովը:

Երբ քմայքը բռնէ խմբախաղ համատի մանուկներէն մէկուն՝ հի՛ւշտ կը ցատկէ թումբի մը գլուխ, կոճղի մը վրայ, կամ պատուհանին մէջ, ու կը ձայնէ. —

— «Կո՛ւկո՛ւլիկո՛ւ, սա՛նա՛մէ՛ր,

«Մեզ հաւ մ՛կար՝ ո՛ւր գնաց...»:

Խաղակիցներէն ո՛րն է որ պիտի դանդաղի տալո՛ւ այս իսկատիպ խաղակոչին պատասխանը:

Եւ ահա՛ կը տեսնես որ ճշմարիտ դերասանական բե՛մ մը կը պարզուի աչքիդ ու ականջիդ տակ. հարց-պատասխան մըն է որ կը տրուի ու կ'առնուի. —

— «Կո՛ւկո՛ւլիկո՛ւ, սա՛նա՛մէ՛ր,

«Մեզ հաւ մ՛կար՝ ո՛ւր գնաց...»:

— «Ծարաւ աղբիւր՝ կո՛ւլ գնաց»:

— «Ի՛նչ կար կտո՛ւցը...»:

- «Զի՛ր չամի՛չ...» :
- «Ո՛ւմ կը տանէր...» :
- «Հա՛րս-փեսի՛ն» :
- «Հարսը ո՛ւր էր» :
- «Վեր (վրայ) ոսկի՛ աթոռին» :
- «Փեսա՛ն ուր էր...» :
- «Վեր (վրայ) ցո՛ճտ ցախաւելին...» :

Մէկ անգամով ալ չի՛ լմննար խաղն ու իր հրապոյրը. — Ա.ք-
լո՛րն ալ մէ՛կ հեղ չէ՛ որ կը ձգէ իր կուկուչիկունն :

Մէկը կ'ըսէ. միւսն անկէ կ'առնէ. ան կ'ըսէ՝ կու տայ միւսի՛ն,
ան ալ ուրիշի մը, և այսպէս խաղն ու խաղերգը շրջան կ'ընէ
բոլո՛ր խաղընկերներուն մէջ :

Վան

ՏԻԳՐԱՆ ՉԻԹՃՆԱՆ

“ԾԱՂԻԿ,,Ի ՀԱՐՑՈՒՄԸ

ՈՐ ՏԱՐԻՔԸ ԿԸ ՍԻՐԷՔ

Ծաղիկ հաճելի և չահեկան ժամանց մը ստեղծելու հա-
մար հարցում մը կ'ուղղէ իր դեռատի ընթերցողներուն. կը
հարցնենք թէ,

Ո՞ր տարիքը կը սիրէք, և ինչո՞ւ : Այսինքն տարիքով
պղտիկ ըլլալ կ'ուղէք, միշտ մանուկ ու զբօսասէ՛ր, թէ ա-
ւելի մեծ, օրինակի համար պատանի, երիտասարդ կամ
չափահաս : Մանկութեան, պատանեկութեան, երիտասար-
դութեան և չափահասութեան մէջ ո՞րը կը նախընտրէք,
ո՞րը ըլլալ կը սիրէք, և ինչո՞ւ, ի՞նչ պատճառներով :

Այս հարցումին կրնան պատասխանել մեր բոլոր ըն-
թերցողները և ընթերցուհիները : Պատասխանները կարելի
եղածին չափ կարճ և ամփոփ պէտք է գրել : Յաջորդաբար
Ծաղիկի մէջ պիտի հրատարակենք այն գրուածները որոնք
ամէնէն աւելի սիրուն, գեղեցիկ և կամ սրամիտ են :

Ահաւասիկ հաճելի մրցում մը : Տեսնենք ամէնէն աղէկ
կերպով որո՞նք պիտի մտածեն և որո՞նք պիտի զգան :



ՊՁՏԻԿ ԿԱՐՄԻՐ ԳԼԽԱՆՈՅԸ

(Հ Է Ք Ե Ա Ռ)

ՓԱՄԱՆԱԿԱԼԻ գիւղացի փոքրիկ աղջիկ մը կար, ա՛յնչափ սիրուն որ նմանը չէր տեսնուած: Մայրիկը կը խենդիկնար ա՛նոր համար, մեծ-մայրիկը ա՛լ աւելի: Այս բարի կնիկը պղտիկին համար կարմիր գլխանոց մը չիւնեց: Այս գլխանոցը անոր ա՛յնչափ աղուոր կը վայլէր որ, ամէն մարդ աղջկան կ'ըսէր «Պղտիկ Կարմիր Գլխանոցը»:

Օր մը, մայրը կարկանդակ չինած ըլլալով, ըսաւ անոր.

— Գնա նայէ մեծ-մայրիկը ի՛նչպէս է: Ըսին որ հիւանդ է: Կարկանդակ մը տար անոր, սա կարագին հետ:

Պղտիկ Կարմիր Գլխանոցը մեկնեցաւ անմիջապէս, երթալ տես-



նելու իր մեծ մայրը որ ուրիշ գիւղ մը չկը բնակէր: Անտառէն անցած ատեն հանդիպեցաւ Գայլ Աղբարին որուն սիրտը դողաց զայն լափելու համար: Բայց չի համարձակեցաւ, որովհետեւ անտառին մէջ քանի մը փայտահատներ կային: Հարցուց աղջիկին թէ ո՛ր կ'երթար: Պղտիկը որ չէր գիտեր թէ վտանգաւոր էր կենալ գայլը մտիկ ընելը, ըսաւ.

— Մեծ մայրիկս տեսնելու կ'երթամ. անոր կը տանիմ մայրիկիս տուած կարկանդակը և աման մը կարագ:

— Շատ հեռու կը նստի՞ մեծ մայրիկդ, (հարցուց գայլը):

— Օ՛, այո՛. սա՛ վարը տեսնուած ջաղացքէն անդին է, գիւղին առաջին տուներէն մէկը (պատասխանեց Կարմիր Գլխանոցը):

— Աղէ՛կ, ես ալ երթալ տեսնել կ'ուզեմ, (ըսաւ գայլը). ես սա ճամբէն պիտի երթամ հոն. դուն ալ սա ճամբէն գնա, տեսնենք առաջ ո՞վ պիտի հասնի:

Գայլը սկսաւ բոլոր ուժովը վազել ամէնէն կարճ ճամբայէն, իսկ պղտիկ աղջիկը զնաց երկար ճամբայէն, դբօսնելով, կաղիններ փրցնելով, թիթեռնիկներուն ետեւէն վազվզելով, և հանդիպած ծաղիկներէն փնջիկներ չինելով:

Գայլը շուտով հասաւ մեծ-մայրիկին տունը. դարկաւ դուռը, թ'ըք, թ'ըք.

— Ո՞վ է ան.

— Քու Պզտիկ Կարմիր Գլխանոցդ է, (ըսաւ գայլը՝ աղջկան ձայնը կեղծելով) մայրիկիս կողմէն կարկանդակ մը և աման մը կարագ կը բերեմ:

Բարի մեծ մայրիկը որ քիչ մը հիւանդ ըլլալուն անկողինն մէջն էր, պօռաց անոր.

— Սողնակը քաշէ՛, դուռը կը բացուի:

Գայլը քաշեց սողնակը և դուռը բացուեցաւ: Վեր ելաւ, գնաց յարձակեցաւ բարի կնոջ վրայ և վայրկենապէս լալիեց զայն, որովհետեւ երեք օրէ բերանը փշրանք դրած չէր:

Յետոյ գոցեց դուռը և գնաց մտաւ մեծ-մայրիկին անկողինն մէջ, սպասելով Պզտիկ Կարմիր Գլխանոցին:

Աղջնակը քիչ ետք եկաւ. դուռը դարկաւ թը՛ք, թը՛ք.

— Ո՞վ է ան.

Պզտիկ Կարմիր Գլխանոցը գայլին խոշոր ձայնը լսելով նախ վախցաւ, բայց մտածելով որ մեծ-մայրը հարբուխ եղած էր, պատասխանեց:

— Քու Պզտիկ Կարմիր Գլխանոցդ է. մայրիկիս կողմէ կարկանդակ մը և աման մը կարագ բերի:

Գայլը քիչ մը անուշցնելով ձայնը, պօռաց.

— Սողնակը քաշէ՛, դուռը կը բացուի:

Պզտիկ Կարմիր Գլխանոցը քաշեց սողնակը և դուռը բացուեցաւ: Գայլը անոր ներս մտնելը տեսնելով, վերմակը գլուխը քաշեց և ըսաւ.

— Կարկանդակը և կարագը սեղանին վրայ դիր և եկուր ծոցս մտիր աղջիկս...

Պզտիկ Գլխանոցը հանուեցաւ և գնաց անկողին մտաւ: Բայց զարմացած մնաց, տեսնելով որ իր մեծ մայրիկը հանուած ատեն հագուած ատենին պէս չէր. տարբեր կերպով շինուած էր:

Աղջիկը ըսաւ անոր.

— Մեծ-մայրիկ, աս ի՞նչ երկայն թեւեր ունիս:

— Քեզի աղէկ գրկելու համար է աղջիկս:

— Մեծ-մայրիկ, ի՞նչ երկայն սրունքներ ունիս:

— Աղէկ վազելու համար է աղջիկս:

— Մեծ-մայրիկ, աս ի՞նչ մեծ ականջներ ունիս:

— Աղէկ լսելու համար է զաւակս:

— Մեծ-մայրիկ, աս ի՞նչ խոշոր աչքեր ունիս:

— Աղէկ տեսնելու համար է, աղջիկս:

— Մեծ-մայրիկ, ի՞նչ խոշոր ակումներ ունիս .

— Քեզի ուտելու համար է . . .

Եւ այս խօսքերը ըսելով, չար գայլը Պզտիկ Կարմիր Դլխանոցին վրայ յարձակեցաւ և զայն լափեց :

ՌԱՐՈՅԱԿԱՆ

Այս հէքեաթէն կը տեսնուի որ, պզտիկ տղաքը, մանաւանդ աղուոր, բարի և սիրուն աղջիկները շատ գէշ կ'ընեն ամէն մարդու խօսքը մտիկ ընելով : Տարօրինակ բան չէ երբ ատոնք լափուին գայլերէ : Դայլերը մէկ տեսակ չեն սակայն : Կան որ անուշ լեզու են, փափուկ, հաճոյակատար մարդու ձեւով են, որոնք պզտիկ տղաքն ու աղջիկները կը հետապնդեն փողոցին մէջ, մինչև տուն կ'երթան անոնց հետ, և կը ջանան խաբել զանոնք : Այս գայլերն են ամէնէն վտանգաւոր գայլերը :

ՌԷՌՕ

ՀԱԻԱՏԱՐԻՄ ՔՐՈՋ ՃՐԱԳԸ

Փոքրիկ կղզիի մը եզերքը միս մինակ կը բնակէր աղջիկ մը խրճիթի մը մէջ : Հայր ու մայր մեռած էին, և իր մէկ հատիկ եղբայրը շատ հեռուն էր ծովու վրայ : Զանոնք կրկին տեսնելու տաքուկ փափաքով կը մտածէր իր սիրելի մեռեալներուն վրայ և բացակային վրայ, որուն դարձին կը սպասէր : Եղբայրը իրմէ հրաժեշտ առած պահուն, խոստացած էր՝ ամէն գիշեր իր ճրագը կախել պատուհանէն, որպէս զի հեռուն ծովուն վրայ լոյս արձակելով, եղբորը ետ դարձած պահուն, ըսէր անոր թէ իր էմմա քոյրը տակաւին կ'ապրէր և թէ իրեն վրայ կը մտածէր : Խոստումը կը կատարէր : Ամէն իրիկուն ճրագը կը դնէր պատուհանին վրայ, և գիշեր ցորեկ կը նայէր ծովուն բացերը, թէ եղբայրը կու գա՞ր արդեօք : Ամիսներ անցան, տարիներ ոահեցան, և եղբայրը չէր վերադառնար : Էմմա սպառաւ : Բայց միշտ պատուհանը կ'ելլէր և աչքերը տնկած կը դիտէր, և ամէն իրիկուն ճրագը կը տեղաւորէր ու կը սպասէր : Վերջապէս խրճիթը մութին մէջ մնաց, և սովորական ճրագը մարած էր : Դրացիները ըսին իրարու . — «Եղբայրը եկած է», և փութացին հաւատարիմ քրոջ տունը : Հոն էր ան, մեռած և երթամած, պատուհանէն վար ծռած, որպէս թէ տակաւին ծովուն վրայ կը սեւեւէր իր նայուածքը, և անոր մօտ կը գտնուէր մարած ճրագը :

Կերմաներէնէ

ՀՐԱՅԵԱՅ



ՊԵՏՕ ԻՆՉՊԷՍ ՊԱՇՊԱՆԵՑ ՍԵՂԱՆԸ

ՊԵՏՕ՝ն, Պետօն Ի՛նչ աչք-բաց, Ի՛նչ լաւ պահապան է գիտէ՛ք :
Պետօն եօթը տարու է յայտ . . . : Մտիկ ըրէ՛ք իր մէկ պատ-
մութիւնը :

Պետոյենց տունը հացկերոյթ մը պիտի տրուէր հայրիկին անու-
նին համար : Պետոյին մեծ քոյրը՝ Սաթենիկ, այդ օրը իր բոլոր
հոգը թափած էր : Գոգնոցը կապած մինչև իրիկուն կերակուրին ու
սեղանին ետեւէն ինկած էր : Եւ իրաւ ալ շատ աղուոր սեղան մը
չտկած էր, ծաղիկներով, պտուղներով, ու դարդարուն անուշե-
ղէններով :

Իրիկուն եղած էր : Հրաւիրեալները սկսած էին գալ : Սաթե-
նիկ սրահ պիտի ելլէր : Մտածեց որ ճաշասենեակը մինակ ձգել չէր
ըլլար : Ո՛վ աւելի յարմար էր : Անմիջապէս կանչեց Պետօն, պատ-
կերադարդ գիրք մը տուաւ ձեռքը, հրամայեց որ նայի և ուշադ-
րութիւն ընէ որպէս զի սեղանը չխառնեն :

— Չէ՛ քույիկ, եչ հոշ եմ,

Պատասխանեց Պետօ, ինքնավստահ շեշտով մը : Եւ նստաւ
անկիւն մը, թղթատելով քուրիկին
տուած գիրքը :

Հինգ վայրկեան ետք սակայն Պետօ սկսաւ ձանձրանալ, այլևս
նայելիք պատկեր չկար : Բարեբաղդաբար Մինէն և Ժօլին եկան
իրեն ընկեր : Մինէն՝ տունին կատուն էր, Ժօլին՝ շնիկը : Ի՛նչ սի-
րուն էին այս կենդանիները որոնք Պետոյի կը քսուէին, անոր ձեռ-
քերը կը լզէին . . . :

Պետօ չէր գիտեր որ Մինէ ու Ժօլի՝ դէպի սեղան կ'ուզէին
երթալ, ան ա՛յնչափ պղտիկ էր որ ատանկ գէշ միտքերը չէր կըր-
նար հասկնալ :

Երբ սեղանին մօտեցաւ, ախորժակը զրգուեցաւ այդ ճօն
ուտելիքներէն : Ուղեց որ այս հացկերոյթին ամէնէն շատ բաժինը
իրենը ըլլայ : Եւ սկսաւ . . . : Սա ելա՛կը, կեռա՛սը թէ նարինջը,
անո՛ւշը, կաթնապո՛ւրը թէ դո՛նդո՛ղը, ո՛րը : Մտաւ կամաց մը խօ-
թեց քաղցրուենիին մէջ ու լզեց : Հապա իր ընկերները . . . : Ժօլի



ու Մինէ, որոնք արդէն առիթի կ'սպասէին, ցատքեցին սեղանին վրայ և ահա լափիլզում մըն է սկսաւ: Պճ... ամէն ինչ տակն ու վրայ կ'ըլլար, ամէն պնակ կը լզուէր: Մեր պղտիկ պահապանը՝ իր երկու ընկերներուն հետ մնացած՝ սեղանը մաքրելու զբաղած էր: Որկրամունքը...:

Բայց ահա հրաւիրեալները իջան: Աս ի՞նչ տեսարան էր: Խընդալէն մարեցան: Պետոյի ծնողքը սաստիկ յուզուեցան, տեսնելով որ ուտելիք բան մնացած չէր գրեթէ: Սկսան յանդիմանել մեր պղտիկ պահապանը, բայց Սաթենիկ միջամտելով ըսաւ.

— Ո՛չ, մի՛ յանդիմանէք: Յանցանքը մերն է որ այս պղտիկ տղան պահապան դրինք այսչափ աղուոր ուտելիքներու: Ան չատ պղտիկ է, և պատասխանատու չէ: Մենք ենք պատճառը եղածին, քանի որ մենք անոր յանձնեցինք գործ մը որ իր կարողութենէն վեր է:

Հանդիսականներն ալ միջամտեցին և կերան ինչ որ կար պատրաստ: Բարեբաղդաբար զինիին դպած չէին որկրամունքը: Հիւրերը աղէկ մը խմեցին, և իրենց համար հաճելի տեսարան մը նկատեցին այս սեղանին աւարառութիւնը՝ երեք պղտիկներու կողմէ:

Բայց Պետո այդ օրէն ի վեր այլևս բանի մըն ալ պահապանութիւնը չըներ:

ԾԵՐՈՒԿ ՀԱՆՍԻՆ



ՊՁՏԻԿ ՇԱՀԱՍԵՐԸ

Օր մը փողոցը տղայ մը պզտիկ
Կուլար կը գոչէր աղմուկով սաստիկ:
Մօտեցայ ըսի.—“Ի՞նչ ունիս տղաս,
“Ինչո՞ւ այդպէս խիստ կը ցաւիս,
Կուլարս”:

—“Ախ ինտո՞ր չի լամ. մայրս
առտուանց,

Քառասուն փարա ստակ էր տուած,
Ան կորսնցուցի. ի՞նչ ընեմ հիմակ”:

—“Առ քեզի (ըսի) անառակ զաւակ,
Նոր քառասուննոց մը ու մի լար այսպէս”:
Տղեկը առաւ նախ խնդում երես.

Բայց քիչ ետք կախեց իր դէմքը նորէն:

—“Հի՞մա ի՞նչ ունիս, պզտիկ անօրէն”:

—“Ախ (պատասխանեց տեսակ մը ցաւով).

Թէ որ դրամս կորսուած չըլլար,

Հիմա զրուշը երկնս հատ կ'ըլլար...”:

(Նմանողաբար)

3...

×

Պետրոսիկ, օր մը դպրոցէն դառնալուն տը
ղու մը հետ կը կռուրտի և ճակատը կը ճան-
կըռտուի: Սեղանին վրայ հայրը կը հարցնէ.

— Ի՞նչ ես եղեր Պետրոս.

— Հայրիկ բան մը չունիմ.

— Ի՞նչպէս չունիս, ատ ճակատդ ի՞նչ է:

Խեղացի մանչուկը հայրը խաբելու համար
կ'ըսէ.

— Հայրիկ ճակատս խածի...:

— Անխէ՛ւք, մարդ ճակատը կրնա՞յ խածնել.

— Հապս հայրիկ, ախտուի մը վրայ ելայ
անանկ խածի...:

ՊԻՍԱԿՈՒԱԾ ԿԱՊԸ



(ԱՆԳՂԻՍՏԻ ՆՇԱՆԱՒՈՐ ՈՍՏԻԿԱՆ

ՇԷՐԼՕՔ ՀՕԼՄՍԻ ԱՐԿԱԾՆԵՐԷՆ)

— Այն պահուն երբ քրոջս ննջասնեակին դուռը կը բանայի, կարծես լսեցի թեթեւ սուշում մը այնպէս ինչպէս նկարագրած էր քոյրս. և վայրկեան մը ետք, որոշապէս լսեցի յստակ աղմուկ մը՝ գետին ինկող մետաղի մը ձայնին պէս: Ենթրը, դուռը բացուեցաւ կամաց մը: Սոսկալով կեցայ, չգիտնալով թէ ի՛նչ կ'անցնի կը դառնայ: Նրբանցքին լամբարին լոյսովը տեսայ քոյրս. դէմքը սարսափէն մոխիր կտրած՝ օգնութիւն խնդրելու շարժումներ կ'ընէր և գինովի մը պէս կը գլորէր: Վազեցի, գրկեցի դայն, բայց սրունքները ուժէ՛ կտրեցան և գետին փռուեցաւ: Ահռելի ցաւերու մէջ եղածի պէս կը շարչարուէր, և իր բոլոր անդամները սոսկալի կերպով կը ցնցուէին: Առաջ, կարծեցի թէ ինձի չճանչցաւ. բայց երբ իրեն վրայ ծռեցայ, ան ինձի պօռաց այնպիսի ձայնով մը զոր երբէք չպիտի կրնամ մոռնալ. «Ա՛խ, Աստուած... Հէլէ՛ն, կա՛պն եր, պիսակուած կապը...»: Ուրիշ բաներ ալ ըսել կ'ուզէր, և իր ձգտուած մատը կարծես կ'ուզէր ծակել խորթ հօրը սենեակին պատը, բայց ջղային նոր ցնցում մը եկաւ վրան և լեզուն բռնուեցաւ: Նրբանցք վազեցի խորթ-հայրս կանչելու, և տեսայ որ ան ալ սենեկազգեստով դուրս կ'ելլէր սենեակէն փութկոտ երբ քրոջս քովը հասանք, ան զգայազիրկ եղած էր: Խորթ-հայրս դաւաթ մը քօնեաք թափեց անոր շրթունքներուն մէջ, գիւղէն բժիշկ կանչել տուաւ, բայց բոլոր մեր ջանքերը ապարդիւն մնացին: Կեանքը կամաց կամաց փախաւ սիրելի քրոջս վրայէն և ան մեռաւ առանց ինքզինքին գալու:

— Վայրկեան մը ներեցէք (ըսաւ Հօլմս). վատա՞ն էք որ այդ սուշիւնը և այդ մետաղական ձայնը լսեցիք. կրնա՞ք ձեր պատուոյն վրայ երդում ընել:

— Ատիկա հարցուց նաև մեր նահանգին դատական չպաշտօնեան, իր քննութեան միջոցին: Համոզումը ունիմ թէ լսեցի: Եւ սակայն սաստիկ մրրիկին ու տունին ճոնչիւնին մէջ, կրնամ սխալած ալ ըլլալ:

— Քոյրդ հագուած էր :

— Ոչ, գիշերազգեստով էր : Իր աջ ձեռքին մէջ գտնուեցաւ իր վառած մէկ լուցկիին մնացորդը և միւս ձեռքին մէջ ալ լուցկիի տուփը :

— Ինչ որ կ'ապացուցանէ թէ ուզած էր լոյս վառել և շուրջը տեսնել : Ասիկա կարեւոր է : Ինչ եղաւ դատական քննութեան արդիւնքը :

— Կործը մանրամասնութեամբ ուսումնասիրուեցաւ, որովհետեւ խորթ հորս՝ տօքթօր Բօյլօթի ընթացքը շատ աղէկ կը ճանչնային նահանգին մէջ : Սակայն չի կրցան մահուան մասին ո և է որոշ պատճառ գտնել : Իմ վկայութենէս կը հաստատուէր թէ դուռը ներսի կողմէն գոցուած էր. գալով պատուհաններուն, անոնք ալ ունէին այն տեսակ փեղկեր որոնք ամէն գիշեր կը գոցուէին երկաթեայ ձողերով : Պատերը խնամքով զննուեցան և ոչ մէկ տեղ արատ մը գտնուեցաւ : Տախտակամածն ալ մինչեւ վարը քննուեցաւ, բայց դարձեալ յաջողութիւն մը ձեռք չբերուեցաւ : Բուխերիկը լայն է, բայց բաւական վերէն գոցուած է չորս զօրաւոր ձողիկներով : Ուրեմն որոշ է թէ քոյրս մինակ էր իր մահուան պատճառ եղող դէպքին ատեն : Ասկից զատ իր մարմինն վրայ բռնաբարուելու ո և է նշան չկար :

— Կարելի է թունաւորուած էր :

— Բժիշկները անոր թունաւորուած ըլլալը հասկնալու համար ալ քննութիւն կատարեցին, բայց վճիռ մը չկրցին տալ :

— Ուրեմն որո՞ւ կը վերագրէք ձեր դժբաղդ քրոջը մահը :

— Ես համոզուած եմ որ ան մեռած է սոսկումէն և ջղային ցնցումներէ : Բայց ո՞վ սոսկացուց զայն, չեմ կրնար երեւակայել :

— Այն ատեն գնչուներ կային պարտէղին մէջ :

— Այո, միշտ գնչուներ կ'ըլլան հոն :

— Այն ատեն ինչ գաղափար արթնցուց ձեր մտքին մէջ այդ կապին, պիտակուած կապին խօսքը :

— Նախ մտածեցի թէ պարզ դառանցանք մըն էր այդ խօսքը, քանի որ ան կրնար նշանակել նաև մարդերու խումբ մը (*) գուցէ պարտէղի սա գնչուները : Ինքնիրենս ըսի թէ արդեօք գնչուներէն շատերուն ճակտին կապուած գունաւոր թաշկինակները քրոջս միտքը իյնալով է որ այդ տարօրինակ բացատրութիւնը գործածած էր :

Հօլմս գլուխը շարժեց այն տեսակ մարդու մը երեւոյթով, որ գո՞ր ըլլալէ հեռու է : Ու ըսաւ .

— Ատիկա ինձի շատ խորհրդաւոր կ'երեւի : Շարունակեցէք ուրեմն ձեր պատմութիւնը, խնդրեմ :

(Շարունակելի)

(*) Անգլիերէն և ֆրանսերէն Bande բառը միեւնոյն ժամանակ Թէ՛ կապ կը նշանակէ և Թէ՛ մարդոց կամ աւազակներու խումբ : Հետեւաբար մեռելին բեռնէն ելած այդ պանօ բառը ճշդիւ համար անոր ամէն իմաստներն ալ նկատի տած է քննիչ ոստիկանը :

Մ Տ Ք Ի Զ Բ Օ Ս Ա Ն Ք

Հանելուկ թիւ 1

- . Ի Ր Ա . կէտերուն տեղ գիրեր դնելով
- . Ն Ք Ն . այս բառերը ամբողջացնել,
- . Թ Ե . այն ձեւով որ, կէտերուն տեղ
- . Ս Տ Ի . դրուած գիրերը, վերէն վար
- . Շ Ե Ն . կաղմեն երկու մեծ մայրաքաղաք-
- . Կ Ք Ա . ներու անուններ:

Հաշուական հարցում թիւ 1

Եօթը հոգի իրենց մէջ բաժնեցին 182 զրուշ. իւրաքանչիւրը իրմէ առաջինէն 3 զրուշ աւելի ստացաւ. ի՞նչ է իւրաքանչիւրին առածը:

Պատասխանները պէտք է հասնին մինչև առաջիկայ հինգշաբթի առտու և գրուած պէտք է ըլլան կողքին վրայի կտրօնին վրայ: Լուծողներէն երկուքը վիճակով պիտի ստանան մէյմէկ գիրք:

Թիւ 52 հանելուկին շուժումն է.

Լ Ծ Ա Կ
Ծ Ա Ի Ի Մէկ երկու ուրիշ
Ա Ի Ա Ր բառերով ալ կ'ըլլայ:
Կ Ի Ր Ք

Թիւ 52 հաշուական հարցումին պատասխանն է. —

Մանրավաճառը 27 զրուշ շահեցաւ:

Ճիշդ լուծողներն են. —

Պեշիկբաշի Ազգ. վարժարանէն՝ Ա. Գազազեան, Սիրվարդ, Վարդ, ԵՄ. Զօրուբեան, Յ. Մարտիկեան, Հ. Դանիէլեան, Վ. Փափազեան, Լ. և Ա. Պօռուճեան, Զ. Անուշաւան, Ա. Մատթէոսեան, Ա. Պոյաճեան, Ս. Փափազեան, Հ. Փիշթօֆճեան, Կ. Գ. Զիթճեան, Սիրան, Ն. Աքիլիւլեան, Պ. Եազմաճեան, Ն. Թուլումպաճեան, Ա. Ըրկատպաշեան, Յ. Բէլէկեան, Հ. Սարաֆեան, Գ. Պաղտասարեան, Յ. Գըլըճճեան, Յ. Գուլուբեան, Հ. Պողոսեան, Լ. Թաթարեան, Ա. Սարգիսեան, Մ. Բիւրքճեան, Ա. Սար-

րաֆեան, Ս. Շահպէնտէրեան: Բերայի էսաեանեկն՝ Յ. Նշանեան,
Ա. Եաղուպեան, Վ. Ունճեան, Ա. Խաչատուրեան, Ա. Կիւլեան,
Զ. Լուսարարեան, Կ. Վէզիրեան, Ատանացի Ռեբեկա, Ա. Աճէմ-
եան, Բ. Սանդուրեան, Հ. Պէրպէրեան, Լ. Պապիքեան, Հ. Սի-
մօնեան, Պ. Բարթամեան, Զ. Գապարաճեան, Ռ. Շահմիրեան,
Հ. Մինասեան, Յ. Թորիկեան, Մ. Սաքաեան, Ռ. Աղամեան, Ո.
Երէցեան, Ե. Մրտիկեան Հ. Աճէմեան: Մայր-վարժարանեկն՝ Հ.
Պուչաքճեան, Ա. Բէրէստէճեան, Յ. Պուչաքճեան, Մագրիգիւղիկն՝
Գեղամ և Արաքսի Խանամիրեան: Վիեննական Մխիթարեանեկն՝
Ն. Աճխունի, Ա. Ծիմնեան, Ք. Ծիզմէճեան, Գ. Զօրայեան, Հ.
Սեւուհի, Պ. Ոսպունի, Ս. Ոսկիանեան, Հ. Սուրէնեան: Կեդրո-
նական ուսումնարանեկն՝ Պ. Գանթարեան, Նախակրթարանէն՝ Լ.
Գազանճեան: Սամաքիայիկն՝ Օ. Միրանեան, Յ. Համբարձու-
եան: Պերպիտեան վարժարանեկն՝ Հ. Ս. Գալֆաեան: Օրբազիւ-
ղիկն՝ Հ. Փանոսեան: Գասըզիւղի Արամեանէն՝ Ս. Թազուորեան,
Մխիթարեանէն՝ Ռ. Մեստուտեան: Պալաթիկն՝ Ս. Գալֆաեան:
Բանկայրիկն՝ Հ. և Ա. Նարկիլէճեան: Համազգեսացիկն՝ Ի. տ. Ազ-
նաւորեան: Նաև Գ. Տէր-Ազարեան, Գրիգոր Յովակիմեան,
Պ. Բէհլիվանեան:

Պարտիզակեկն՝ Հ. Տրէզեան, Հ. Տ. Անդրէասեան, Մանուկ,
Զ. Զաքարեան, Ա. Հաբէլեան, Կ. Տ. Կարապետեան, Ս. Տ.
Ստեփանեան, Բարձր. վարժարանի սաները, Ազգ. վարժարանի
սաները և այլն: Գոնիայի ձեկնանեան վարժարանեկն՝ Վ. Յ. և Կ.
Պալապանեան, Կ. Կէօտէեան, Կ. Յ. Սարաֆեան, Կ. Գ. Սա-
րաֆեան, Գ. Գապրիժալեան, Գ. Գահվէճեան, Գ. Սինապեան,
Կ. Վարժապետեան, Վ. և Յ. Զուլլուեան, Կ. Կիւրիլեան, Հ.
Բէպապճեան, Մ. Օտեան, Թ. Կոստանեան, Ղ. Պէրպէրեան, Ս.
Մակարեան: Նիկովիդիայիկն՝ Յ. Յովնանեան, Գ. Փաթթուքեանց:
Պանսրմայիկն՝ Ղ. Յ. Յովնանեան: Ինկայօղուիկն՝ Ս. Սահակեան:
Ասքազարիկն՝ Ն. Դայրճեան: Պրուսայիկն՝ Վ. Բարթոլ: Օր-
տուիկն՝ Ն. Յ. Անմահեան լուծած է թիւ 5) հանելուկը:

Վիճակը շահեցան Պէշիկթաշի վարժարանէն՝ Հ. Փիթօֆճեան
և Պէրպէրեան վարժարանէն՝ Հրանտ Գալֆաեան, որոնք կ'ստանան
խոստացուած գիրքերը:

Մ Ե Ր Կ Տ Ր Օ Ն Ը

Վիճակահանութեան և հրատարակութեան կարգ մը անպատե-
հութեանց համար որոշած ենք ԲԱՅԱՐՁԱԿԱՊԷՍ ՁԸՆԴՈՒՆԻԼ այն
կտրօնները որոնց վրայ ՄԷԿԷ ԱԻԵԼԻ անուն գրուած է: Բացա-
ռութիւն են այն կտրօնները, որոնց վրայ եղբայրներու կամ քոյ-
րերու անուններ կան:

ՄԻԱՅՆ ԳԱՒԱՌՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ Դ .

Գտէք յատուկ անուն մը, որուն ճիշդ մէջտեղի գիրը երբ վերցնենք երկու տարբեր բառեր կազմուին, և երբ այս երկու բառերուն մէջէն մէյմէկ գիր տեղափոխենք, կազմուի հասարակ անուն մը: (Գր. Փարբուխանց):

Չորս շաբաթ պայմանաժամ: Լուծողներէն մէկը պիտի շահի հետեւեալ գիրքերէն մէկը, զոր Մերձան, Մարգարեան գրատունը կը կը նուիրէ. — Օսմ. պատմութիւն՝ Մ. Աշճեան: Կենսագրութիւն Մրրուհի մայրապետի: Առողջապահութիւն: Զրուցատեսիլի ընթացարան: Լուծողները կրնան գրել իրենց ուզած գիրքը:

Պատասխանները պէտք է գրել կողքին ետեւի մեր սովորական կտրօնին վրայ:

ՄԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՊԱՐԳԵՒՍՈՐ ՄՐՑՈՒՄԸ ԿԱՐԳԱՆ ԿՈՂՔԻՆ ՎՐԱՅ .

«ԾԱՂԻԿ» ԵՒ ԴՊՐՈՑՆԵՐԸ

Ահաւասիկ ցանկը անցած ամիս այլևայլ վարժարաններու բոլոր դասարաններուն մէջ Ա. Բ. Գ. հանդիսացող աշակերտներուն և աշակերտուհիներուն:

ԲԵՐԱՅԻ ԷՍԱԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ. — Աղջկանց Զ. կարգէն՝ Ա. Սիրանոյշ Գոռանեան, Բ. Սիրարիի Տ. Ներսէսեան, Գ. Վէրժին Բէքմէղեան: Մանչերու Դ. կարգէն՝ Ա. Հայկ Մրտիկեան, Բ. Գրիգոր Բէօլէեան, Գ. Յարութիւն Փափազեան:

ԲԱԲԵՐԴԻ ՄԵՍՐՈՊԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ. — Գ. կարգէն՝ Անդրանիկ Վարդերեսեան, Յովհաննէս Ժամկոչեան և Եղուարդ Վարդերեսեան:

Ս. ԳՐ. ԼՈՒՍ. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ. — Ը. դասէն՝ Ճամպազ Յովսէփ, Դարբինեան Լեւոն, Դաֆթանճեան Յովսէփ, Դոչիկեան Յովսէփ, Չէօմլէքճեան Ստեփան:

ՍԱԳԸԶ ԱՂԱՃԻ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎՐԺ. — Ա. դասարանէն՝ Ա. Հայկ Սերովբեան, Բ. Հրանտ Գասեւեթեան, Գ. Լեւոն Յարութիւնեան:

ՔԻՐՄԱՍԹԻ ԹՈՐԳՈՄԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ. — Զ. դասարանէն՝ Ա. Վահան Աճէմեան, Բ. Յովակիմ Աճէմեան, Գ. Թազւոր Մուրաշայեան:

ԷՏԻՐՆԷԻ ԱԶԳ. ՎԱՐԺԱՐԱՆ. — Միջին Բ. դասարանէն՝ Իսկուհի Ս. Ալթունեան, Միհրդատ Կ. Ալթունեան, Սանդուխտ Տ. Աւետիսեան, Գրիգոր Յ. Խորասանճեան:

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԱՌԵԻՏՐ. ՎԱՐԺԱՐԱՆ. — Դ. կարգէն՝ Ա. Մկրտիչ Բէշիշեան, Բ. Հրանտ Գուրապեան, Գ. Յովսէփ Մոմճեան:
(Շարունակելի)

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՊԱՐԳԵԻԱԻՈՐ ՄՐՑՈՒՄ

Ծաղիկ զպրոցներու մէջ ուսումնական առաջըիմութիւնը զարգացնելու համար բացած է պարզեաւոր մրցում մը :

Որոչեց մասնաւոր մրցանակներ տալ այն ամէն ուսանողներուն որոնք ամբողջ տարուան մը միջոցին աշխատասիրութեան և ուսմանց մէջ առաջ անցած են իրենց ընկերակիցներէն :

Մրցանակին մասնակցելու իրաւունք պիտի ունենան Պոլսոյ և Գաւառներու վարժարաններուն ԲԱՐՁՐԱԳՈՅՆ՝ այսինքն Շրջանաւարտ կարգերը, և անկից անմիջապէս վար եկող միւս ԵՐԿՈՒ ԿԱՐԳԵՐԸ, այսինքն մեր թաղային վարժարաններուն վրայ չափելով՝ բարձրագոյն երկրորդ, բարձրագոյն առաջին և միջին երկրորդ դասարանները, կամ ազգային վարժարաններէն զուրս միւս նախակրթական վարժարաններուն վերէն սկսելով Ա. Բ. և Գ. դասարանները : Այսպէս, այս երեք դասարաններէն ճարտարական ֆրանսիականց մէջ ԱՌԱՋԻՆ, հանդիսացող ուսանողներէն և ուսանողուհիներէն ՏԱՍԵՐԿՈՒ ՀՈԳԻ հրապուրիչ և գեղեցիկ մրցանակներ պիտի ստանան :

Ահաւասիկ մրցանակները . —

1. ԺԱՄԱՑՈՅՑ ՄԸ. (Այս ժամացոյցը հանրածանօթ ՄԷՐՃԱՆՕՅՎ վաճառատան բերել տուած իխպալ անուն «Օքսիտէ» տեսակէն է, որուն բանտիւլը քարի վրայ կը դառնայ) :
2. ՆԻՔԷԼԷ ՉԱՐԴԱՐՈՒՆ ԿԱՂԱՄԱՐ ՄԸ, ապրանք հանրածանօթ Ռօման թղթավաճառատան, Կալաթա :
3. ՈՍԿԵՉՕԾ ԿԱՂԱՄԱՐ ՄԸ :
4. ԺԱՄԱՑՈՅՑ ՄԸ, օֆսիսէ, ապրանք ծանօթ յանձնակատար վաճառական էտուար Լութֆեան էֆ.ի, Պէօյիւք Միլլէթիւսան, Կալաթա :
5. ՊՐՕՆՁԷ ԱՐՉԱՆՈՎ ԿԱՂԱՄԱՐ ՄԸ, ապրանք՝ Բերայի Պազար ԵՄՔԵՆ վաճառատան, Աղաճամի, Բերա :
6. ՆԻՔԷԼԷ ԿԱՐԿԻՆԻ ԴԵՂԵՑԻԿ ԿԱՉՄԱԾ ՄԸ, ամբողջ մանրամասնութիւններով, ապրանք՝ Լէօֆլէր տպարան-թղթա վաճառատան, Թիւնէլի մօտ, Բերա :
7. ԿԱՐԿԻՆԻ ԱՄԲՈՂՉ ԿԱՉՄԱԾ ՄԸ, գեղին մետաղէ :
8. ԿԱՐԿԻՆԻ ԱՄԲՈՂՉ ԿԱՉՄԱԾ ՄԸ, գեղին մետաղէ :
9. ԿԱՂԱՄԱՐ ՄԸ ՊԱՅՕՆ ՅԱՏԱԿՈՎ :
10. ՆԵՐԿԻ ԿԱՉՄԱԾ ՄԸ :
11. ԿԱՂԱՄԱՐ ՄԸ :
12. ԿԱՂԱՄԱՐ ՄԸ :

Որոչած ենք նաև հրատարակել Պոլսոյ և Գաւառի վարժարաններուն բոլոր կարգերուն մէջ, ամէն ամիս Ա. Բ. և Գ. հանդիսացող աշակերտներուն և աշակերտուհիներուն անունները :

Այս մրցումներուն մանրամասնութեանց համար կարդալ Ծաղիկի անցած 47 թիւը :

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՊՈԼՍՈՅ ԵՒ ԳԱՒԱՌՆԵՐՈՒ ՀՍՄԱՐ

Տարեկան 30 զրուշ: Վեցամսեայ բաժնեգին չկայ:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀՍՄԱՐ Տարեկան 7 ֆրանք:

ԲԱՑԱՐՁԱԿԱՊԷՍ ԿԱՆԽԻԿ

Բաժնեգիները կարելի է ղրկել Օսմ. մանտարութով, փոխ՝ գրով, եւ կամ զրոյմաթուղթով (20 հատը 20 զրուշի հաշուով):

Մանուցման, բաժանորդագրութեան եւ թերթին վերաբերող մէջն կարգի գործառնութեանց համար ղիմել մի՛ միայն՝

Ս Ա Գ Ա Ե Ա Ն Ի

ازعياك غزتهسى { درعليهده غلطهده قورشوانلى خاندند. نومرو ۷

«Մ Ա Ղ Ի Կ» Հ Ա Ն Դ Է Ս

Կ. Պոլիս, Ղալաթիա, Գուրչունլու խան, թիւ 7

REVUE "DZAGHIK,"

Constantinople, Galata, Kourchoum Han, N° 7.

ՄԱՆԶՈՒՄԷ

Պատկերազարդ Օրաթերթ առաւօտեան: Բազաքական, գրական, գիտական, ազգային եւ տնտեսական: Տարեկան բաժնեգինն է Պոլսոյ համար 80, գաւառաց համար 108, իսկ վեցամսեայ Պոլսոյ համար 50 եւ գաւառաց համար 60 զրուշ: Ձեռքէ՝ հատը 10 փարա: Մանզումէն մէջն ժողովրդական օրաթերթն է Պոլսոյ, իր հաճելի եւ պէսպիսութեամբ լեցուն բովանդակութեան համար: Բացի ամենօրեայ խումբադրական, եկեղեցական, գրական, տնտեսական եւ այլ յօդուածներէ, քաղաքական, ազգային եւ ներքին ճոխ լուրերէ, չորեքշաբթի եւ շաբաթ օրերը կը հրատարակուի առեւտրական եւ գրական յաւելուածական էջերով:

ՈՐՆ Է

Տղաքներու եւ զպրոցականներու համար ամէնէն աղէկ գրատունը.

— Չախնախնար Մեծ Նոր խանին ջակ, ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԸԼԸԸՃՃԵԱՆԻ Կեդրոնական Նոր Գրատունը.

ՈՒՍՈՒՑԻՉ ՄԸ, որ գիտէ լաւ թուարանութ., գրահաշիւ, երկրաչափութ. եւ տոմրկլթ. իբրեւ մասնաճիւղ, եւ միւս ճիւղերը՝ գոհացուցիչ կերպով, պատրաստ է դաւառական բարձր նախակըրթարաններու մէջ ընդունիլ ուսողութեան ուսուցչի պաշտօն, եթէ գոհացուցիչ ամսական վճարուի: Դիմել ին՝ Բազարութեանս եւ մենք հասցէն կու տանք:

Հոծուս թիւ 1 հասկնուկին եւ հարցումին.